



## 72. ՇԱԹՐՇԱՄԻ ՀԵՔԻԱԹԸ

Թավրեզ քաղաքում արբում էր մե շատ հարուստ պառավ կնիկ: Մարթը բազրգյան էր հելե, մեռեր էր, հարստությունը մացեր էր կնգան: Կնիկն էլ ոչ մարթի էր գնացե, ոչ էլ տան վրեն մարթ էր բերե: Մացե, պառվցեր էր: Տղա, աղջիկ, ազգական, բարեկամ չուներ: Պառավը շատ ոսկի ուներ, մտածեց, որ հինքը պառվցեր ա, էս ոսկին վի՞ր խրմար ա պախում: Հիրա ամաններն էլ հասարակ են: Մե ոսկե թաս չինել տա, էտ մաքուր ամանով ճաչ ուտա:

Վերցուց մե կիլո ոսկի, գնաց մե ծանոթ զարգարի մոտ, ասավ. — Զարգա՛ր ախպեր, էս ոսկին ա՛՛ո, մե ոսկե թաս չինա՛, մեչը ճաչ լցեմ, էտ ամանից ուտեմ:

— Լավ ես մտածե, խա՛նըմ քույրիկ, — ասավ զարգարը:

— Ի՞նչ կառնես չինելու հախ, զարգա՛ր:

— Կառնեմ իրեք մանեթ, խա՛նըմ քույրիկ:

— Առ խինգ մանեթ կրտամ, լավը պաղրաստա՛, թե կանաս, իմ նկարն էլ խա՛ն վրեն, չես կանա, դու գիղաս, մի՛ խան, բան չըկա:

— Նկարտ կըխանեմ, խա՛նըմ քույրիկ, եթե որ դու նստես էստեղ, որ հիշկամ քեզի, նկարեմ:

— Կընստեմ, գործիս անո՞ւնն ինչ ա: Կովե՞րն են մնացե կթելու, թե՞ արտը բդի խաց տանեմ:

Պառավը նստավ, էրկու-իրեք սհաթ խոսացին, զարգարը ոսկին խալեց, լցեց ղալիբը, դրեց էն յանը: Մե սհաթ հետո պաղավ, ղալիբից խանեց:

— Դե, խա՛նըմ քույրիկ, դո՛ւզը նստի, հիշկա՛ ակուշկի յանը, սկսում եմ նկարել:

Լավ զարգար էր: Կես սհաթ չըքաչեց, նկարն էլ արավ, թասը տվեց պառվին:

Պառավը շնորակալ հելավ, թասը վերցուց գնաց: Թասը տարավ տուն, մտածեց. «էթամ խարիսաչու մոտ, խարիսա բերեմ, ուտեմ, սիրտս խարիսա ուզեց»: Վերցուց թասը գնաց: Նարիսաչին որ տեսավ ոսկե թասը, քիչ մնաց խելքը թոցու:

— Նարիսաչի՛, — ասավ պառավը, — էս թասը խարիսա լի՛ց, ինչ քո փողն է, վերցո՛ւ:

—Նանե՛, խարխսեն պաղրաստ չի, Հիրկվա յան պաղրաստ կըլ-  
նի, թասը դի՛ր թարեքը, Հիրկվա յան արի՛, լավ եղոտ, մսոտ տեղից  
լցեմ, տա՛ր:

Պառավը թասը դրեց թարեքը, գնաց: Որ պառավը գնաց, խա-  
րխաչին էկավ, թասը վերցուց, ըտու նման մե պղնձե թաս ուներ,  
դրեց տեղը: Որ տեսավ թասի վրեն, պառվի նկարը կա, վերցուց  
մեխե ծերով պղնձե թասի վրեն պառվի նկարը քաշեց: Հիրկվա  
յան պառավն էկավ:

—Պարխսեն պաղրաստ ա, թաստ բե՛ր:

Պառավը թարեքից վերցուց թասը, չըհիշկաց, խարխսա  
լցեց, տարավ տունը: Տարավ տուն, տեսավ, որ խարխսի հերեսը  
փաստտավ:

—Իա՛, էս ի՞նչ բան ա, ոսկե ամանի մեջի ճաշը հընչի՞ ա  
փաստտում: Էստեղ մե բան կա:

Վերցուց գնաց զարգարի մոտ: Զարգարը տեսավ, ծծղաց:

—Ամանտ փոխեր են, խա՛նըմ քույրիկ, էսի հասարակ պղնձե  
աման ա, նկարտ էլ մխով են նկարե, էս որտե՞ղ ես տարե, որ էս-  
քան շուտ փոխին:

—Թողեր եմ խարխսաչու մոտ:

—Ես հնար չեմ կանա անել, գնա՛ Ծաթրչամի մոտ, թե հնար  
անա, Ծաթրչամն անա, էնի բարի մարթ ա, կանա:

Թասը վերցուց գնաց Ծաթրչամի մոտ, ասավ, ոնց որ հելեր էր:

Ծաթրչամն ասավ.—Քո թասը կրբերեմ, հըմա մե փոր եղով  
ճաշ պտի տաս, որ ուտեմ: Ծատ պետք չի: Տասնխինգ գրվանքա  
բրինձ կանես փլավ, իրեք գրվանքա եղ կըլցես վրեն, կուտեմ: Թե  
որ խինգ գրվանքա էլ չամիչ եղով դաղես, լցես վրեն, հավելի լավ:

—Գնա բե՛ր, Ծաթրչա՛մ, ես սկսում եմ պաղրաստել:

Ծաթրչամը գնաց խարխսաչու տունը, խարխսաչու կնգան  
ասավ, որ կովը մորթեն, հիմի հինքը կրգա:

—Հընչի՞ կովը մորթենք, Ծաթրչա՛մ:

—Ասում էր, որ խորը պատարաք ա անում:

—Ներն էս օխտը տարի մեռեր ա, հիմի՞ ա պատարաք անում,  
խելքը թոցրե՞ր ա:

—Օխտը տարին մեկ բոլորն էլ պատարաք են անում:

—Իե լավ, Ծաթրչա՛մ, արի մորթա՛, հիմի ես որտեղի՞ց տղա-  
մարթ գտնեմ:

—Կըմորթեմ, կըքրթեմ, հըմա մե բուղը կըտանեմ, հա՛:

—Լա՛վ, արի մորթա՛:

Մորթեց, քրթեց, ետի բուղն առավ, գնաց:

Էտ վախտ խարխսաչին գործը վերջացուց էկավ տուն:

Կնիկը նեղացած էկավ հառեչն ասավ.—Բա հիմի կով մորթելու, պատարաքի ժամանակ ա:

—Ի՞նչ կով, ի՞նչ մորթել, ի՞նչ պատարաք, ա՛յ կնիկ:

Կնիկը պատմեց Շաթրչամի ասածը:

—Բան չըկա, ա՛յ կնիկ, էնենց բան եմ բերե, որ տասը կով արժի, ա՛յ ոսկե թաս:

էտ ժամանակ Շաթրչամը ետ էր էկե, կայնե մե մութ տեղ: Մարթի ասածը լսաց:

—Կնի՛կ, տա՛ր օթաղը, դի՛ դուրթին, էթանք թավլեն, միսը փոթենք, հէքուց մսով խարիսա կանեմ, թանգ կըծախեմ, բան չըկա:

Ըստոնք որ գնացին գոմը, Շաթրչամը մտավ օթաղը, թասը վերցուց, տարավ տվեց պառվին: Պառավը փլավը դազանով դրեց Շաթրչամի հառեչը: Շաթրչամը լիերով կերավ, շնորակալ հելավ, գնաց իրա տունը: Երգրորթ օրը Շաթրչամը խարիսաչու ճաշարանի մոտով հընցնում էր: Խարիսաչին որ տեսավ, մատով նշան արավ, կանչեց ճաշարան: Հըլա չի հիմանում, որ թասը տարեր ա:

Շաթրչամին ասավ.—Շաթրչա՛մ, խափիր, կովը մորթեցիր: Արի իմ ախպորն էլ խափա, թե չէ վրես կըծծղա:

—Մե փոր խարիսա ուտացրո՛ւ, ասածդ անեմ:

Խարիսաչին մե դազան խարիսա՛ շերեփը մեչը, դրեց Շաթրչամի հառեչը: Շաթրչամը շերեփը վերցուց իրեք հրուպեի մեչ դազանը դառտկեց ու գնաց: Գնաց մե մեչոք քրոչ հավաքեց, տարավ խարիսաչու ախպեր Հասանի մոտ: Հասանը ներկարար էր:

Տվեց, ասավ.—Հասա՛ն ախպեր, էս բուրթը ներկա՛: Ե՞փ գամ տանեմ:

—Շաբաթ օր կըգաս, կըտանես:

Հասանը մեչոքը բացեց, տեսավ քրոչ ա, բուրթ չի:

—էս Շաթրչամը ուզում ա մե օյին խաղա, կնի՛կ, որ շաբաթ օրը գա, ես սուրթ մեռել կըձևանամ, կըտանեք, դնեք մեռելների մեչ, հետո տուն կըգամ:

Շաթրչամը շաբաթ օրը էկավ հիրա բերածը տանելու: Հախն էլ՝ քսան մանեթ, բերել էր: Կնիկն ասավ, որ Հասանը մեռավ, տարեր ենք, դրե մեռելների մեչ: Պարսկաստանում սովորություն կար, մեռելներին չին թաղում: Գաշտի մեչ բանցը հասար ին քաշե, մեռելներին դնում ին հասարի մեչ, որ նեխեն, միսը թափի, մնա օսկորը:

Հասանին թաբուրթով տարե, դրեր ին մեռելների մոտ: Շաթրչամը գնաց պարկավ Հասանի դազաղի կողը: Գիշերվա կեսին իրեք ավազակ թալանը բերե, էտտեղ կիսում ին:

Հասանը լսաց ըտոնց ձենը, ձեռը պարզեց, ասավ.—Քսան մանեթ էլ տվեք ընձի, Շաթրչամի ներկի հախը, Շաթրչամը փողս չի տվե:

Ավազակների մագերը բիզ-բիզ հելավ:

Շաթրչամն էն յանից ասավ.—Որ ամեն մեռելի քսան մանեթ տան, հո՞ւր կըխասնի, քո հախը մե մանեթ էլ չի: Ուզում ես քսանի բաժի՞ն ուտես: Չէ՛, հավասար բաժանենք:

Ղաչաղները որ էտ էլ լսացին, թողին ու փախան:

Մտան քաղաք, ասին.—Մեռելները սաղացեր են, խին պարտքեր են հավաքում:

Ղաչաղների փողը Շաթրչամը վերցուց, քսան մանեթ տվեց Հասանին, բերեց տուն:

Հասանի կնգան ասավ.—Մարթիտ բերեր եմ, չըթողեցի՝ մեռնի, դե ընձի կչտացո՛ւ:

Մե դազան փլավ քցին, կերավ, գնաց:

